Արձանագրություն N 2

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից ***գույքի գնահատման ծառայության*** ձեռքբերման նպատակով կազմված «ԵՐՋԷԿ-ԳՀԾՁԲ 26/17» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

ք. Երևան

02.10.2017թ.
ժ. 10:00-ին

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Բաղդասարյանը

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Դադունցը

Ա. Թագայանը

Բ. Հարությունյանը

Վ. Խաչատրյանը

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Գրիգորյանը

Գնումների պլանով նախատեսված ***գույքի գնահատման ծառայության*** համար գնման հայտով սահմանված՝ գինը կազմում է **20 000 000** ՀՀ դրամ:

***<u>Նիստի օրակարգը</u>***

1. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները.
2. Տվյալներ՝ էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին:
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը:
4. Տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ:
5. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը:

***1. Ընթացակարգին մասնակցելու նպատակով www.armeps.am համակարգի միջոցով էլեկտրոնային եղանակով հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները:***

| Հ/հ | Մասնակցի անվանում | հասցեներ |
|---|---|---|
| 1. | «Էյ Էնդ Էմ Ֆայնենշլ Քոնսալթինգ» ՓԲԸ | ք. Երևան, Արամի 64 |
| 2. | «Արթին Էնթրփրայս» ՍՊԸ | ք. Երևան, Կոմիտասի պող. 51 |

***2. Ընթացակարգի հրավերի պահանջներին մասնակիցների ներկայացրած էլեկտրոնային հայտերի կազմման և ներկայացման համապատասխանության և հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.***

2.1 Հանձնաժողովն ուսումնասիրելով մասնակիցների ներկայացրած հայտերը՝ ***արձանագրեց***, որ հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

2.3 ***Հանձնաժողովը որոշեց.***

- «Արթին Էնթրփրայս» ՍՊԸ-ի էլեկտրոնային հայտը գնահատել բավարար՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու հիմքով:
- Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ ենթակետով՝ «Էյ Էնդ Էմ Ֆայնենշլ Քոնսալթինգ» ՓԲԸ-ի հայտը մերժել՝ հրավերով սահմանված պայմաններին ոչ համապատասխան կազմված լինելու հիմքով (ներկայացված էլեկտրոնային հայտում ներառված փաստաթղթերի վրա տեսանելի չեն էլեկտրոնային թվային ստորագրությունները):

**Կողմ 5, դեմ 0:**

***Հարց 3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը:***

3.1

| Հ/հ | Մասնակցի անվանումը | Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/ | ԱԱՀ** /տառերով և թվերով/ | Ընդհանուր գինը /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|---|
| | «Արթին Էնթրփրայս» ՍՊԸ | 19 900 000 (տասնինը միլիոն ինը հարյուր հազար) | ------------ | 19 900 000 (տասնինը միլիոն ինը հարյուր հազար) |

***Հարց 4. Տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ:***

***4.1 Հանձնաժողովը որոշեց.***

«Արթին Էնթրփրայս» ՍՊԸ-ին ճանաչել որպես առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

**Կողմ 5, դեմ 0:**

***Հարց 5. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին:***

*5.1 Հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝*

- Ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում կներկայացնի առաջին տեղն զբաղեցրած մասնակից «Արթին Էնթրփրայս» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:
- Ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով՝ էլեկտրոնային փոստի միջոցով կծանուցի առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի

միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

**ԾԱՆՈՒՑՈՒՄ** – *Սույն արձանագրության հետ միաժամանակ առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկվում է արձանագրությունը ստանալուց երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:*

5.2 Հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը նշանակել առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները քարտուղարի կողմից հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երկրորդ աշխատանքային օրը, ժամը 11:00-ին, ք. Երևան Արին Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3 հասցեում:

**Կողմ 5, դեմ 0:**

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Բաղդասարյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Դադունց

Ա. Թագայան

Վ. Խաչատրյան

Բ. Հարությունյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Գրիգորյան